ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 14 » մարտի 2014 թ. N 74-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ, ՍՅՈՒՆԻՔԻ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻՆ ՄԿՆԱՍՊԱՆ ԹՈՒՆԱՆՅՈՒԹ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2014 թվականի փետրվար-մարտ ամիսներին «Անասնաբուժա-սանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից Հայաստանի Հանրապետության մարզերի ցածրադիր գոտիներում կատարված մոնիթորինգի արդյունքները՝ մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2014 թվականի գարնանը մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերին հատկացվող ցինկի ֆոսֆիդ մկնասպան թունանյութի բաշխացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ավագյանին՝

1) ապահովել ցինկի ֆոսֆիդ մկնասպան միջոցի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության Լոռու, Սյունիքի, Տավուշի մարզկենտրոններ և անհատույց հանձնումը մարզպետարանների կողմից լիազորած անձանց՝ սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված չափաքանակներով,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված ցինկի ֆոսֆիդ մկնասպան միջոցի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալներ Ս. Գալստյանին և Ռ. Մակարյանին:

ՆԱԽԱՐԱՐ

Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գուղատնտեսության նախարարի
2014 թվականի մարտի 3-ի N 74 -Ա հրամանի

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ, ՍՅՈՒՆԻՔԻ և ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՑԻՆԿԻ ՖՈՍՖԻԴ ՄԿՆԱՍՊԱՆ ԹՈՒՆԱՆՅՈՒԹԻ

Մարզը	Տարածությունը (հա)	Թունանյութի քանակը (կգ)
Լոռի	1313	157.56
Սյունիք	1850	222
Տավուշ	360	43.2
Ընդամենը	**3523**	**422.76**